№ 185 Հոկտեմբերի 18 (30) 1880 Հոկտեմբերի 18 (30) № 185

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ. Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ".

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսուցչական ժողովներ։— Ներքին տեսութիւն։ Նամակ Շուշուց։ Նամակ Արմիանսկից։ Նամակ Երևանից։ Նամակ Խմբագրին։— Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Ֆրանսիա։ Աբխազեան գործեր։ Նամակ Պարսկաստանից — «Մշակի» հեռագիրներ։— Յայտարարութիւններ։

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

I

Այս ամառը Թիֆլիսում հայոց ուսուցիչների և մի ուսուցչուհու փոքրիկ շրջանում մի վերին աստիճանի համակրելի և անհրաժեշտ հարց բարձրացաւ և մասամբ մինչև անգամ իրագործվեց դա՝ ուսուցչական ժողովների հարց է։

Ինչպէս «Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է՝ այսուհետև Թիֆլիսում ամեն տարի լինելու են հայոց ուսուցիչների և ուսուցչուհիների ընդհանուր ժողովներ։

Ցաւալի կը լինի, եթէ այդ գործն էլ, ինչպէս ամեն մի սկսված գեղեցիկ (և ոչ գեղեցիկ սկսված) գործ, մեր ղեկավարների շնորհիւ չը հասնի իր նպատակին։

Բայց ինչու հայիս շատ անգամ շատ գործ չէ յաջողվում, կը հարցնեն մեզ։

Մի քանի պայմաններից մէկն էլ, և մեր կարծիքով ամենագլխաւորը, այն է, որ մենք, հայերս, սովորութիւն չունենք նախապատրաստվելու մի նոր գործ սկսելու և առաջ տանելու համար. դեռ բէպէրտուար չը կազմած, դերասաններին ենք հրաւիրում, մեր հասարակութեան, ազգի պահանջներ չիմացած և ուղղութիւն չորոշած և դորա համեմատ աշխատակիցներ չորոնած, սկսում ենք ամսագիրներ և գաւառական թերթեր հրատարակել, առաջուց չը մտածած այս կամ այն ընկերութեան նպատակի վրա, նախապէս չը կշռած թէ ի՞նչ տեսակ մարդիկ են հարկաւոր մեզ այդ նպատակը արդարացնելու համար և ո՞ւր են մեզանում, որոնք կարող էին օգտաւէտ լինել, գալիս ենք ընդհանուր ժողովներին և հէնց առաջի աչքի զառնողին ենք ընտրում և այլն և այլն։

Մենք միայն աչքի առաջ ունենք, որ առանց դրամական միջոցների գործ չէ կարելի կատարել և մեր բոլոր նախապատրաստութիւններ շրջանակվում են միմիայն նրանց որոնելով։ Թատրոնական բէպէրտուար չունենք, աշխատում ենք աբօնէմենտի տոմսակներ ծախել, դեռ լրագրի ամսագրի նիւթի, բովանդակութեան, ուղղութեան վրա չենք մտածել, ստորագրողներին ենք որսում և այլն։ Մենք մոռանում ենք, որ դ ր ա մ ը գործ չէ, դա միայն մի միջոց է, որով գործ պէտք է կատարվի, իսկ նա երբէք չի կատարվի, եթէ լաւ սկսված չէ։ Գործը լաւ սկսելու և առաջ տանելու համար միայն դրամ բաւական չէ—հարկաւոր են ուրիշ տեսակ նախապատրաստութիւններ։

Մի նոր գործ մեզանում բսկսվում է կարծես միայն նորա համար, որ ուրիշ ազգեր վաղուց այդ իրագործել են և ոչ նորա համար, որ դա մեզ անհրաժեշտ է, որ դորանից կարող է կախված լինել մեր յառաջադիմութիւնը, մեր ազգի ապագան։

Ուրեմն եթէ մենք չենք ուզում միայն կապիկութիւն անել, եթէ իրաւ մենք ցանկանում ենք, որ մեզանում մի բան իրագործվի ոչ անուան համար, այլ մեզ օգուտ տալու, մենք այնպէս չը պէտք է սկսենք մի նոր գործ, ինչպէս մինչև այժմս ենք սկսել. մեզ հարկաւոր է, ասում ենք նախապատրաստվել։

Միրզա

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

11 հոկտեմբերի

Արդէն յայտնի է, որ Անդրէաս եպիսկոպոսը հոգևոր իշխանութիւնից նշանակվեցաւ Շուշու առաջնորդ, աչա եօթներորդ ամիսը յաջորդում է վեցերորդին, ուրեմն ամբողջ կէս տարի է անցել այդ նշանակած օրից, բայց դեռ ևս Շուշին առանց յաջորդի է և նրա հարիւրաւոր գործերը առանց ղեկավարի։ Հոգևոր կառավարութեան կողմից այսպիսի սխալ ընթացքը թող 'ի նկատի առնուի, որ ապագայում մեծամեծ չարիքների և դժուարութիւնների պիտի հանդիպի։ Այն գործերը, որոնց վճիռը այսօրից վաղն է ձգվում, ապագայում տարիների չարչարանք պիտի պահանջեն։ Ուսումնարանի կալուածական խճճված և հակայական խնդիրը, գեղերում դպրոցներ բանալու դժուարութիւնները և տեսակ տեսակ արգելքները՝ սրանք այնպիսի մի խնդիրներ են և օրական հարցեր, որոնց անուշադիր թողնելը համարեա թէ կեանքի և մահու նշանակութիւն ունեն Շուշու թեմի համար, և իւրաքանչիւր իզուր անցկացրած բոպէն գուցէ և անդառնալի կորուստ պատճառէ այդ հարցերին։

Եթէ Անդրէաս եպիսկոպոսը իբրև տեսուչ կարևոր է ճեմարանին, նա իբրև առաջնորդ տասնապատիկ աւելի անհրաժեշտ է Շուշու թեմին։ Գուցէ նրա տեսչութիւնից այնքան շատ չունենայ ճեմարանը, որքան նրա կամ մի այլ հմուտ, աչալուրջ ու եռանդոտ հովվի բացակայութիւնից, տասնապատիկ պիտի վնասվի Շուշին և իր վիճակը։

Եթէ Անդրէաս եպիսկոպոսը անհրաժեշտ է ճեմարանի համար, ուրեմն թող Շուշու համար նշանակվի մի ուրիշը։ Շուշին կարօտ է առաջնորդի, Անդրէաս եպիսկոպոսը չի լինի, մի այլը լինի, միայն Շուշու վիճակը ստանար մի հմուտ, արթուն և եռանդոտ հովիւ։

Եւ վերջապէս հոգևոր իշխանութեան կողմից անարդարութիւն էլ է, որ մի վիճակ հոգայ իր բացակայ առաջնորդի ռոճիկը, որից դեռ մի մի կոպեկի չափ հոգացողութիւն չէ տեսել և ոչ էլ յոյս ունի թէ այդ տեսակ ընթացքից (այսինքն նրա բացակայութեան ժամանակ պիտի մի թեթև օգնութիւն ստանայ, բացի վնասը։

Եթէ իրաւ Շուշու հոգսը Էջմիածնի սրտին մօտիկ է, թող վերջինս շտապէ փոխել իր այդ տեսակ անտեղի կարգադրութիւնը, որով և մի մեծ բարիք հասցրած կը լինի Շուշու վիճակին, փրկելով նրան սպառնող մեծամեծ վտանգներից։

***

ՆԱՄԱԿ ԱՐՄԻԱՆՍԿԻՑ

Հոկտեմբերի 4-ին

Թէև ձեր պատուական «Մշակ» լրագրին ցարդ ոչ բաժանորդ եմ և ոչ թղթակից, անուամենայնիւ այստեղ իմ ընկերներիս միջոցով ստացված բոլոր համարները անուշադիր չեմ թողած։ Կարդալով միշտ մեր ամենից յարգված պատուական լրագիրը, և տեղեկանալով տարաբաղդ Թիւրքաց Հայաստանի անմխիթար դրութեան մասին, չը կարողացանք անտարբեր մնալ, այլ աջակցութեամբ տեղւոյս բարեկրօն Օգսենտիոս Հայրունի քահանայի, որ մի համառօտ և ազգասիրական եռանդով լի ծանուցումով այս օրերս եկեղեցու բեմից հրաւիրեց տեղւոյս բարեպաշտ հասարակութիւնը մասնակցելու ազգային գործին, բաց արինք մի ստորագրութիւն յօգուտ սովելոց և միասին շրջագայելով մեր համաքաղաքացոց տներ, ժողովեցինք ընդամենը 169 րուբլի 35 կոպէկ, որ թէև մի չնչին գումար է, այնուամենայնիւ նայելով ժողովրդոց սակաւ թուին, չափաւոր է և անկեղծ սրտից բղխած. այս գումարից բաց հանելով մի րուբլի 35 կոպ. ճանապարհածախս, մնացեալ 168 րուբլին ուղարկելով ձեզ սոյն գրոյս հետ, խնդրում եմ, յարգոյ խմբագիր, բարեհաճէք հասուցանել ըստ պատկանելոյն, տպագրելով միանգամայն նուիրատուաց անունները պատուական «Մշակիդ» էջերում 'ի միամտութիւն և 'ի խրախոյս իւրեանց և այլոց։

Օպեռեան Մկրտիչ 10 ր., Պ յեան Եղբարք 10 ր., Ալեանաքեան Եղբարք 10 ր., Նալպանդեան Ստեփանոս 5 ր., Տապախեան Յովսէփ 5 ր., Քարաքաշեան Մկրտիչ 5 ր., Տուակոնեան Յովհաննէս 5 ր. Մելքոնեան Պաղտասար ր., Ծուլիկեան Մարտիրոս 5 ր., Աբրահամեան Պօղոս 5 ր., Ալթնթօփեան Եղբարք 5 ր., Յակովբեան Սիմէօն 5 ր., Ջալիքեան Սարգիս 3 ր., Հալաճեան Անդրէաս 3 ր., Հալաճեան Սրբուհի 3 ր., Ղազարեան Ծերօն 3 ր., Մելքոնեան Մարիամ 3 ր., Մաչաւեան Գասպար 3 ր., Հալաճեան Յովհաննէս 3 ր., Օպեռեան Ալէքսիանոս 3 ր., Նալպանդեան Լուսեղէն 3 ր., Харитонъ Х нчасъ 3 р., Խոռօզեան Յովհաննէս 2 ր., Ռեզնիքեան Գէորգ 2 ր., Տալտապանեան Լուսպարոն 2 ր., Տապախեան Ադամ 2 ր., Օպեռեան Մինաս 2 ր., Մազլումեան Ներսէս 2 ր., Նալպանդեան Յովհաննէս 2 ր., Ղայսերցեան Կարապետ 2 ր., Իշխանեան Խաչուկ 2 ր., Մազլումեան Գաբրիէլ 2 ր., Բախալեան Լուսեղէն 2 ր., Տապախեան Նիկողայոս 2 ր., Բախալեան Մինաս 2 ր., Ճինճիւղեան Քերովբ 2 ր., Նալպանդեան Գէորգ 1 ր., Քելովեան Մելքոն 1 ր., Միսիրեան Եղիսաբէթ 1 ր., Խոռօզեան Յովսէփ 1 ր., Ճինճիւղեան Մկրտիչ 1 ր., Ստամպօլցեան Սարգիս 1 ր., Տափախեան Խաչուկ 1 ր., Սօլայեան Պապուճան 1 ր., Ոսկերճեան Գէորգ 1 ր., Խլեզնիքեան Պօղոս 1 ր., Մազլումեան Լուսեղէն 1 ր., Նալպանդեան Մելքոն 1 ր., Նալպանդեան Մանուկ 1 ր., Եազճեան Աստուածատուր 1 ր., Մազլումեան Սարգիս 1 ր., Լաչինեան Ստեփանոս 1 ր., Петро Бѣлоивановъ 1 р., Վարդանեան Աբրահամ 1 ր. Մարտիրոսեան Մարտիրոս 1 ր., Տօլկինեան Մելքոն 1 ր., Գօմիւրճեան Մինաս 1 ր., Георгій Христофоровъ 1 р., Խաճեան Սերովբէ 1 ր., Христофоръ Михайловъ 1 р., Ժեմչուկեան Մարտիրոս 1 ր., Պայեան Աւետիք 1 ր., Мееръ Фишердлеръ 1 р., Спиридонъ Корэль 1 р., Василій Тотачевскій 1 р., Алексѣй Колеченко 1 р., Мееръ Яновикъ 1 р., Петръ Инашенко 1 р., Պուռնազեան Յակովբ 1 ր., Ռեզնիքեան Յովհաննէս 1 ր., Մելքոնեան Գրիգոր 50 կ., Պօղոսեան Գէորգ 50 կ., Филипъ Корэль 50 к., Քարաքաշեան Գրիգոր 50 կ., Семенъ (грузинъ) 25 к., Շահինեան Յովակիմ 10 կ.։ Ընդամենը 169 ր. 35 կ.։ Ճանապարհածախսը բաց հանեալ, մնաց 168 ր.։

Գրիգոր Ալթնթօփեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Հոկտեմբերի 6

Ցրտերն սկսվում են։ Այգիները քաղվում են. բերքը միջակ է, գինին կարող է թթու լինել, որովհետև օրերը զով անցան, խաղողը լաւ չը հասաւ, թէև սովորականից երկու շաբաթ ուշ է քաղվում։

Իւղի պուդը 18—20 րուբլի է և չէ էլ ճարվում. պանրի պուդը 9 րուբլի է, ուրեմն շաքարից թանգ է։ Ցորենի խալվարը (30 պուդը) 45—55-ի մէջ է խաղում. ցորենատէրերը չեն ծախում, որ ժամանակով աւելի թանգ ծախեն։ Կենտրոնական գիւղերում շտեմարաններ են շինվել, բայց ապահովութեան մասին պատասխանատու չեմ։ Նահանգապետը առաջարկում է քաղաքիս մէջ էլ շտեմարան շինել, բայց չեմ կարծում, որ քաղաքային վարչութիւնը համաձայնվի։ Այդ մասին նիստ կայացաւ, բայց խնդիրն անորոշ մնաց։ Քաղաքումս օրական 20 խալվար ցորեն է սպառվում. ուրեմն ամսուայ մէջ 600 խալվար. տարին կերթայ 7200 խալվար. 50 րուբլիով հաշուած՝ կը լինի 360,000 րուբլի. միացրած սորա հետ և միւս կարևոր ծախսերը՝ գուցէ լինէր մօտ 70,000 րուբլի։ Եթէ այս գումարի $1/3$ մասն անգամ բաւ լինէր, այնուամենայնիւ քաղաքը չէր կարող ճարել. իսկ եթէ ճարէր էլ՝ և սկսէր նահանգիցս գնել, աչագին թանգութիւն կը ձգէր ողջ նահանգի և իր շրջակայ նահանգների մէջ. այս միտքը յայտնեց իրաւասու պ. Վասիլ Եղիազարեանցն էլ և միւս իրաւասուները համաձայնվեցան։ Հարկաւոր էր ունենալ ուրեմն մօտ 100,000 րուբլի և այդ գումարով դրսից ցորեն բերել տալ և թանգութիւն չէր լինի։ Բայց այդ

գումարը միանուագ չի ճարվի և հետևաբար շտեմարան չենք ունենայ:

Շտեմարանի փոխարէն գոնէ պատրաստի դրամագլուխ ունենայինք. ասա թէ ոչ՝ հացթուխների ձեռքին գերի կը լինենք:

Հացթուխները գնահատութիւն (տակսա) ասած բանը չեն ճանաչում. երբ կամենում են փոխել են տալիս նշանակած գինը. քաղաքային վարչութիւնը չէ կարողանում նոցա կամայականութիւնը սանձահարել: Հացթուխների և մսավաճառների կամայականութիւնը կարելի էր զսպել նախ՝ մրցումով, որ չը կայ. երկրորդ՝ այն ժամանակ, երբ ոստիկանութիւնը, հաշտարար դատաւորն ու քաղաքային վարչութիւնը միմեանց օգնէին օրինաց համաձայն, բայց այժմ դոցա մէջ սերտ յարաբերութիւն չէ նշմարվում: Քաղաքային վարչութեան կարգադրութիւնների մեծագոյն մասը մնում է անկատար և օրըստօրէ հասարակութեան համակրութիւնը պակասում նուազում է դէպի այդ ամենակարևոր հիմնարկութիւնը: Սորա պատճառը կայանում է նախ՝ նորանում որ վարչութեան հրահանգը տակաւին հաստատված չը լինելով նահանգապետից, ամենայն վճիռ մնում է թղթի վրա, կամ շատ դանդաղ է կատարվում. երկրորդ՝ ասում են, վարչութեան գործադիր անդամները չեն համապատասխանում իրանց կոչմանը. երրորդ՝ իրաւասուները չեն աջակցում պարտ ու պատշաճ կերպիւ գործադիր վարչութեան. չորրորդ՝ հասարակութեան մէջ տակաւին չէ մարմնացել ինքնավարութեան վսեմ սկզբունքը. հինգերրորդ՝ ասում են ոստիկանութիւնը համամիտ չէ գործում վարչութեան հետ և ուրիշ պատճառներ էլ կան, բայց հարկաւոր չէ սագերին գրդռել....

Քաղաքային վարչութեան քարտուղարը գրաւոր յայտարարութիւնով մեղադրեց գործադիր վարչութիւնը՝ ոչ միայն անգործունէութեան մէջ, այլ և այնպիսի զանցառութիւններում, որք եթէ ստուգվին, քրէական քննութեան կենթարկվին գործադիր վարչութեան անդամները: Ստուգութեան համար քննիչ յանձնաժողով է կազմվել. կը ցանկայի որ չը ստուգվէին քարտուղարի ցուցմունքները:

Քարտուղարի ընտրութեան ժամանակը լրացաւ, բայց կրկին ընտրվեց հակառակ գործադիր վարչութեան ցանկութեան:

Ուրեմն իրաւասուների բազմութիւնը (33-ից 24 սպիտակ քար ձգվեց) հակառակ է վարչութեան գործադիր անդամներին: Ով է մեղաւորը, ես չեմ վստահանում պատասխանել. ցաւում եմ միայն որ բանն այսպէս է:

Պարտք եմ համարում ինձ այս ևս ասել, որ եթէ այժմ պ. քաղաքագլուխը և վարչութեան անդամները հրաժարվէին, իրաւասուները չէին կարող նոցանից լաւերին դնել նրանց տեղումը. ուստի պէտք է խոհեմ լինել և փոքր ինչ էլ ներողամիտ, որովհետև գործը նոր է և պահանջում է աւելի փորձառութիւն: Բացի որ վարչութեան պարտադիր հրահանգը վաւերացած չէ, այդ պատճառով գործերի դանդաղ ընթացքը վերագրում են այդ հանգամանքին: Դրան են վերագրում նաև քաղաքիս զզուելի և աննկարագրելի աղտոտութիւնը, փողոցների և կամուրջակների քարուքանդ դրութիւնը: Թաղերի գարշահոտ աղբիւսները, քուչաների կանգնաչափ խորութեամբ փոշիները, հում թխած հողախառն հացը, քաղաքի թաղերով, բաց ու կեղտոտ առուներից վազող ջրերը պատճառել են զանազան տեսակ հիւանդութիւններ և վատառողջութիւն: Երևանի պէս ջրառատ քաղաքի գլխաւոր փողոցներն անգամ չեն ջրվում, ուստի փոքր ինչ քամի եղած ժամանակ, քաղաքն անտեսանելի է դառնում փոշու ամպերի մէջ: Այս պատճառով աչքացաւն ու թոքացաւը խիստ առատ է մեզանում:—Ոստիկանութեան կառավարութեան ժամանակ քաղաքիս մուտքը հասնում էր 35 հազար րուբլու, այժմ հասնում է 55 հազարին, բայց էլի քաղաքային արկղը դատարկ է և քաղաքիս մաքրութիւնն էլ նոյնն է, ինչ որ էր ոստիկանութեան միջոցին. այս շատ ցաւալի է:

Պ. Ղևոնդ Ղազարեանը տեսնելով քաղաքային արկղի դատարկութիւնը՝ նուիրել է իր քսակից 10,000 րուբլի, որ Քառասնադիւր (ղրախբուլախ) կոչված ջրից խողովակներով ջուր բերվի. բայց ջուրը բերելու համար, ասում են, 20—25 հազար րուբլի պէտք է: Լսում ենք, որ յիշեալ պարոնը տեսնելով որ պակաս դումարը լրացնող չը պիտի լինի, մտադիր է բոլոր ծախսն իր քսակից անել և այդպիսով անմահացնել իր անունը մեր հասարակութեան սրտի մէջ. փառք և պատիւ այդպիսի մեծադործ քաղաքացիներին:

Պարոն Աղէքսանդր Մելիք-Աղամալեանը ևս անցեալ նիստին կամեցաւ իբրովսանն օգնել քաղաքային արկղին, առաջարկելով իր երկյարկի քարվանսարան երեք տարի ժամանակով ձրի, որ տարին մօտ 1000 րուբլի վարձ է բերում, երաժշտական խմբին բնակեցնելու. բայց վարչութիւնը մի այլ տուն վարձած լինելով, չը կարողացաւ ընդունել: Պ. Աղամալեանը նոյն քարվանսարան տասը ամիս ժամանակով տուաւ Սաչականուշեան օր. դպրոցին, որ տայ վարձու և վարձն ստանայ, խորին շնորհակալութիւն պ. Մելիք-Աղամալեանին:

Քաղաքային ինքնավարութեան թշնամիները միշտ աշխատում են վարչութեան անփորձառութիւնից ծագած սխալները մեծ ցոյց տալ իսկականից, որպէս զի յաջողեցնեն վարչութեան անկումը:

Այս մի երազ է, որ վարչութեան թշնամիները չեն դադարում երազելուց:

Հասարակութիւնը զարգացած չէ այնքան, որ կարողանայ սկզբունքը (պրինցիպը) գործադրութեան կերպից զանազանել: Դժբաղդութիւնը նորանումն է, որ մարդս չը կարողանայ իրան տրուած իրաւունքից օգուտ քաղել և չը կարողանայ ազատութիւնը դերազասել ստրկութիւնից: Իրաւասուներից շատերը կարծում են, թէ «իրաւասութիւնը» մի տիտղոս է միայն, որ շնորհված է իրանց, ուրիշ ոչինչ: Նիստի ժամանակ դոցա պարագլուխն ասում էր. «Մթթէ այս տիտղոսը մեզ տրվել է, որ մենք ուրիշների տները մաքուր պահելու վրա մտածենք. ամօթ չէ արդեօք այս «իրաւասու» պատուանունը կրել և քաղաքի թաղերի աղբը հաւաքողների վրա վերահսկողութիւն անել....Պոլիցիան ամեն բան ինքն էր մտածում և անում. հիմայ դուք մեզ կանչում էք և առաջարկում որ ամեն կեղտոտութեան, ամեն պակասութեան մասին մտածենք և գործենք. մթթէ ես պարտաւոր եմ իմ բան ու գործը թողել և այս պատաւոր անունով «խալխի» տները և արտաքնոցները մաքուր պահելու վրա հոկել:»

Շատ բաներ կան ասելու այդպիսի խելօք իրաւասուների մասին, բայց ես առ այժմ թողում եմ, յուսալով որ դոքա վերջապէս կը հասկանան իրանց պարտաւորութիւնը:—Տեղային մամուլի պարտաւորութիւնն է միակել հասարակութեան կարծիքը դէպի ինքնավարութեան ազնիւ գաղափարը, բայց տեղային թերթի պ. խմբագիրը պարապած է առ այժմ հանդուցեալների տուների հետ, և հասկացնում է հասարակութեանը, որ այս ինչ անձը ֆարմասիօն էր և թէ երբ մեռաւ իր ջորու հետ հավարձաւ մինչ եօթներորդ երկինքը: Այդ է պատճառը, որ պ. Պ. պալանեանը նրկարվում այժմ իշի վրա նստած, իբր կարիկատուր, և կպցնվում է պատերին, իսկ իր թերթը ստացել է արդէն «Պիսակ» անունը, որ նշանակում է բորոտ կամ քոսոտ. և իսկ որ քոսոտել է ու բորոտել այդ թերթը, որովհետև բացի արատաւոր ու անպատկառ ստորանութիւնից և հայհոյանքներից, ուրիշ մի լաւ բան չես գտնի նորանում: Շատ ափսոս, որ նորա խմբագիրը փիլիսոփայ է և գործով չէ համապատասխանում իր գնած տիտղոսին:

Նորայր

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Սարատով, 7 հոկտեմբերի

«Մշակի» 169 համարի ներքին լուրերի մէջ «Մեղուի» կեղծ անուններով պատապարված աղխատակիցների թուում դուք յիշում էք և մի անուն—«Սոր-Սէր»:

Հարցը այնքան նշանաւոր է, որ ես չը կարողանալով անտարբեր մնալ, բարոյապէս հարկադրված եմ հրապարակօրէն խոստովանվել, որ իրաւի այդ անունը մի ժամանակ ինձ էր, իսկ եթէ այժմ մի ուրիշն է սեպհականացրել,—Աստուած բարի վայելում տայ: Բայց արդէն վեց տարի է, որ ես ոչ թէ միայն չեմ թղթակցում «Մեղուին», այլ և չեմ կարդում նրան և նրա երեսն էլ չեմ տեսնում: Ուրեմն եթէ 1874 թուականից յետոյ որ և իցէ աղխատութիւն երևել է «Մեղուի» մէջ այդ ստորագրութեամբ, դա իմը չէ, դա ոչ թէ կեղծ, այլ ամենակեղծ է. Բացի այդ՝ ազգութեան և կրօնի խնդրի վերաբերութեամբ դեռ ևս 1872 թուականին ես յայտնել եմ իմ հայեացքը նոյն իսկ «Մեղուի» մէջ «Նամակ Աստրախանից» յօդուածում մէջ. այդ հայեացքը ինձ համար անհերքելի համոզմունք է եղել և կը մնայ միշտ: «Մեղուն» կամակորում է ճշմարտութեան դէմ, պատճառ այդ ճշմարտութիւնը ոչ ինքը, այլ «Մշակն» է արծարծել առաջին անգամ, և նա այս պրինցիպին հաւատարիմ կը մնայ մինչև վերջ. «Մեղուն կամակորում է ինքն իր դէմ, պատճառ նրա գոյութիւնը զուգընթաց է իր բռնած ուղղութեան հետ, մի յամառ, ժամանակակից հոգուն հակառակ տարր փայփայում է «Մեղուին» նրա թունաւոր զանգվածի համար. այդ այն տարրն է, որ գիտակցաբար պղտորում է ջուրը միամիտ որսեր անելու համար. նրան ձեռընտու չէ այն ազատ գաղափարը՝ որ քարոզում է «Մշակը»: Գուցէ «Մեղուն» իր հայհոյական շռայլութիւնից մի բաժին ևս ինձ կը տայ, բայց թող հաւատացած լինի, որ ես այնքան հեռու եմ ապրում, որ նրա բզզոցը անզօր է այնքան տարածութիւնից լսողութեանս վրդովելուն:

Իմ ծանօթների կասկածը փարատելու և գլխաւորապէս այդ հարցի վերաբերութեամբ իմ հայացքը պաշտպանելով, պատուական «Մշակին» անկեղծ համակրութիւնս արտայայտելու նպատակով մէկ մերժէք, խնդրում եմ ձեզ, մի անկիւն շնորհել նամակիս ձեր լրագրի էջերի մէջ:

Կ. Փամպուխչեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻԱ

«Presse» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, հոկտեմբերի 15-ից, հետևեալը. Բ. Դրան Պրիզրէնից ստացած տեղեկութիւնները հաստատում են այն լուրը, որ այս օրերս մի քանի մարդիկ յարձակումն գործեցին աւստրիական թարգմանի տան վրա, և չը նայելով նրա յուսահատ ընդդիմութեանը, սպանեցին տանտիրոջը և իր կնոջը: Մարդասպաններից պաշտպանվելու ժամանակ, նա աւազակներից երկուսին սպանեց և երկուսին վիրաւորեց: Բ. Դուռը հրաման ուղարկեց Պրիզրէնի վարչութեանը, որ ամեն միջոցներ գործադրեն յանցաւորներին բռնելու և պատժելու համար:

ՖՐԱՆՍԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները:

Բոնապարտիստները հոգացին փոքր ի շատէ զուարճացնել եւրօպական հասարակութեանը, որ չափազանց ձանձրացած է արևելեան գործերի դանդաղ ընթացքից: Նրանք հաւաքվեցին Ֆերնանդօի ցիրկի մէջ և վճռեցին, որ բոնապարտեան ընտանիքի այժմեան ներկայացուցիչ Իշխան Ժերոմ պէտք է հրաժարվի իր իրաւունքներից Ֆրանսիական գահի վրա յօգուտ իր մեծ որդի, Իշխան Վիկտոր Բոնապարտի: Բայց Իշխան Ժերոմ հրաժարվից ընդունել պատգամաւորներին և յայտնեց նրանց մի նամակով, որ ինքը ոչինչ բանից հրաժարվելու դիտաւորութիւն չունի և որ իր որդին չէ ընդունում բոնապարտիստների առաջարկութիւնը:

Այսպէսով բոնապարտեան կուսակցութիւնը այս անգամ պաշտօնապէս մնաց առանց առաջ որդի: Մինչև այժմ այդ կուսակցութիւնը կարող էր իր առաջնորդ համարել Իշխան Ժերոմին, որի իրաւունքները այժմ նա մերժեց: Այդ կուսակցութեան և բոնապարտեան ընտանիքի այժմեան ներկայացուցչի մէջ մինչև այժմ եւրօպային յայտնի անհամաձայնութիւն չը կայ, այժմ այդ անհամաձայնութիւնը կատարված փաստ է: Բոնապարտիստներին այժմ մնում է միայն փոխել իրանց դրօշակը և միանալ Ֆրանսիական միապետական միւս կուսակցութիւններից մէկի հետ: Միևնոյն ժամանակ միապետական և կղերական այդ կուսակցութիւնը որ միշտ պարծեցել է իր յեղափոխական ծագումով, անկարող է ամբողջապէս միանալ Ֆրանսիական միւս կուսակցութիւններից մէկի հետ:

Նրանց ամբողջապէս չեն ընդունի ոչ օրինականները և ոչ հանրապետականները: Նրանց մնում է միայն զոնաղան մասերի բաժանվել:

Այդպիսի բաժանման փնտանները այնքան ակներև են, որ կարող է մի անսպասելի անցք պատահել Ֆերնանդօի ցիրկի մէջ ժողովով կազմող պարոնների համար: Բոնապարտիստները հասկանալով, թէ ինչպիսի ողբերգելի դեր պէտք է խաղան այն կուսակցութիւնների մէջ, որոնց հետ ստիպված կը լինեն միանալ, գուցէ ստիպված կը լինեն իշխան Ժերոմին առաջնորդ ճանաչել բոնապարտեան կուսակցութեան, որ այդ դէպքում մաքրված կը լինի կղերականներից և հանրապետութեան անհաշտ թշնամիներից: Այդպէս փոփոխված ձևով բոնապարտեան կուսակցութիւնը դեռ կարող է ապագայ ունենալ Ֆրանսիայի նման մի երկրի մէջ, որտեղ ժողովուրդի մեծամասնութիւնը հեշտութեամբ է հաշտվում ընտրեալ միապետների հետ: Իշխան Ժերոմ կարող է բաւական լինել Ֆերնանդօի ցիրկի մէջ եղած ժողովից, բայց այդ ժողովին մասնակցողները անուղղելի հարուած տուին իրանց կուսակցութեան գործին:

«Դելի Նէյուս» լրագրին Վիէննայից գրում են հոկտեմբերի 14-ին. Քաղաքական աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համեմատ Ֆրանսիան Արևելեան հարցի վերաբերութեամբ Գերմանիայի և Աւստրիայի հետ համաձայնութեամբ կը գործի և կընդդիմանայ արտաքոյ կարգի միջոցների գործադրելուն: Այդ երեք պետութիւնները լաւ են համարել լսելութեան գահընկէց անելը: Այդ պետութիւնները հարց են բարձրացրել ոչ թէ միայն սուլթանին գահընկէց անելու մասին, այլ և Թուրքաց գահը մի աւելի ընդունակ ընտանիքի ներկայացուցչին առաջարկելու մասին: Արևելեան հարցի այդպիսի լուծումը ամենաանվտանգն է համարվում:

Լրագիրներին Փարիզից հաղորդում են հետևեալը: Հեռագիրների և փօստային մինիստր Կ. Կոշլրի հոկտեմբերի 15-ին հանրապետութեան նախագահ Գրեվիին ներկայացրեց միջազգային փօստային կոնֆերենցիայի անդամներին: Հանրապետութեան նախագահը ընդունելութեան ժամանակ շնորհաւորեց կոնֆերենցիայի գործունէութիւնը, որ օգուտ կը տայ Եւրօպայի առևտրին և կը հաստատի խաղաղութեան և ազատութեան գործը: Նոր ժողովուրդները, պատերազմողներից և նուաճողներից արդիւնաբերողներ և առևտրական դառնալով, աւելի մեծ օգուտ տուին խաղաղութեան և ազատութեանը, քան թէ քաղաքականութիւնը և փիլիսոփայութիւնը:

Առաջ ժողովուրդները ապրում էին պատերազմներով և աւարներով, իսկ այժմ նրանք ապրում են իրանց արդիւնաբերութեամբ և նրանց փոփոխելով: Առաջ նրանք միմեանց ջարդում էին, իսկ այժմ փոխադարձապէս հարստանում են: Նիդերլանդների փօստային գլխաւոր դիրեկտորը շնորհակալութիւն յայտնեց Ֆրանսիայի հիւրասիրութեան համար և յոյս տուեց, որ կոնֆերենցիան բաւականացուցիչ հետևանքների կը հասնի:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

«Հաւասի» ընկերութեանը հեռագրում են հոկտեմբերի 15-ից: Այսօր էրզնօգօրիական իշխանի պատուաւոր զօրքերի ուղեկցութեամբ հասաւ Յետինիէ էրզնօգօրիական զօրքերի գլխաւոր հրամանատար Բօժօ Պետրովիչ: Զերզնօգօրիական իշխանը խնդրեց Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներին ներկայ գտնվել, երբ կը սկսվին բանակցութիւններ Դիւրքաց հաւատարմատարի հետ Դուլցինիօն յանձնելու մասին:

«Ստանդարտ» լրագրին հոկտեմբերի 15-ից հաղորդում են, որ Թիւրքերը ընկղմում են Զմիւռնիայի նաւահանգստի մէջ տօրպեդներ, որպէս զի ընդդիմադրեն միացեալ նաւատորմին մտնել Զմիւռնիայի նաւահանգիստը, եթէ պետութիւնները այդպիսի կարգադրութիւն անեն։ Կառավարութիւնները քննում են այն հարցը, թէ Դուլցինիօի յանձնելը Զերնօգորիային արդեօք կարելի է հարցի բաւականացուցիչ վճիռ համարել, որպէս զի կարելի լինի արձակել միացեալ նաւատորմը։ Թիւրքաց շրջաբերականի յանդուգն բովանդակութիւնը զուցէ կը խանգարէ նաւատորմի յետ կանչելուն, որովհետև ուրիշ կերպ նաւատորմի յետ կանչելը այնպէս կարելի էր մեկնել, իբր թէ Եւրոպան վախեցաւ Բ. Դրան սպառնալիքներից։ Թիւրքաց վերջին երկու շրջաբերականների յանդուգն խմբագրութիւնը վերաբերում են Մուսուրուս-փաշային, որ հաւատացնում է սուլթանին, իբր թէ պահպանողական կուսակցութիւնը Անգլիայի մէջ աւելի զօրեղ է, քան թէ ազատամիտ կուսակցութիւնը։

Կ. Պոլսից «Պոլիտ. Կորրես.» լրագրին գրում են հոկտեմբերի 12-ից։ Զերնօգորիական հարցի պատճառով պատահած վերջին դժուարութիւնները կարող են դասել համարվել թէ Թիւրքիայի և թէ ամբողջ աշխարհի համար։ Բ. Դուռը կարող էր նկատել, թէ ո՞ր կողմն էր տալիս բարեկամակա. և անշահասէր խորհուրդներ։ Դեռ հոկտեմբերի 9-ին գործերի դրութիւնը չափազանց խճճված էր և խաղաղութեանը վտանգ էր սպառնում։ Անգլիական կառավարութեան զայրոյթը, որ վերաւորված էր Բ. Դրան բռնած ընթացքից, ստիպ էր տալիս ենթադրելու, որ Անգլիան ստիպողական միջոցներ կը գործադրէ։ Լօնդօնի մի տիրող տրամադրութիւնը երևում էր այն առաջարկութիւններից, որ անգլիական կառավարութիւնը անում էր միւս պետութիւններին։ Հարցը նրանումն էր, արդեօք պետութիւնները կընդունէին Անգլիայի այդ առաջարկութիւնները։ Եթէ Բ. Դուռը շարունակէր իր յամառութիւնը, պետութիւնները ստիպված կը լինէին Անգլիայի հետ համաձայնութեամբ գործել։ Անգլիական դեսպանատանից սպառնալիքներ տրվեցան Թիւրքաց արտաքին գործերի մինիստր Ասիմ-փաշային։ Այդ պատճառով Ասիմ-փաշա իր օգնական Արտին Դադեանի հետ այցելեց բոլոր վեց պետութիւնների դեսպաններին։ Բ. Դրանը յայտնի էր, որ աւստրիական, գերմանական և ֆրանսական կառավարութիւնները մտադիր չեն անփոփոխ ընդունել Անգլիայի առաջարկութիւնները։ Մի և նոյն ժամանակ այս երեք պետութիւնները առաջարկում էին Բ. Դրանը, որ սա ամեն կերպ աշխատէ դժուարութիւնների առաջն առնել և հնարաւոր զիջումներ անել։ Բ. Դուռը գտնեա որ և է զիջումներ պէտք է անէր, որ եւրոպական պետութիւններից մի քանիսը իրան պաշտպանէին։ Գերմանական դեսպանը յայտնեց Թիւրքաց կառավարութեանը, որ եթէ Դուլցինիօ յանձնվի Զերնօգորիային, պետութիւնները ի նկատի կառնեն այդ հանգամանքը և միւս հարցերի վճռելու ժամանակ շատ չեն պահանջի։ Այդ խորհուրդը անկատար մնաց և մինչև անգամ դրա պատճառով սուլթանը բարկացաւ։ Մի և նոյն խորհուրդը տուեց Թիւրքաց կառավարութեանը մի այլ հարևան պետութեան ներկայացուցիչ։ Այս անդամ Բ. Դուռը աւելի խելացի կերպով վարվեցաւ։ Ռիզա-փաշա հրաման ստացաւ իր զօրքերը դուրս բերել Դուլցինիօից։ Այդ լուրը Կ. Պոլսի մէջ ուրախութեամբ ընդունվեցաւ։ Այնուամենայնիւ անգլիական դեսպան պարոն Գօշեն հաւատացնում էր, որ Թիւրքիայի այդ զիջումը չափազանց աննշան և ծիծաղելի է և որ հարկաւոր է ստիպողական միջոցներ գործադրել։ Բ. Դուռը շարունակում է իր պատրաստութիւնները։ Զինուորական մինիստրի հրամանով այ ձակուրդ ստացած Թիւրք օֆիցերները հրաւիրված են ծառայութեան։ Բացի այդ Թիւրքաց կառավարութիւնը պատուիրել է 600 տօրպեդ ընկղմել Թիւրքաց նաւահանգստների մէջ։ Այդքանը բաւական է համարվում նաւահանգիստները պաշտպանելու համար։ Թէ էստ արտաքին գործերի մինիստրի օգնական Հայ Արթին Դադեան բարեխղճաբար էր կատարում իր պաշտօնը, այնուամենայնիւ երևի նա կարձակվի ծառայութենից։ Հաւատացնում են, որ պ. Գօշեն անհամբերութեամբ սպասում է, որ իր կառավարութիւնը արձակէ Իրան դեսպանի պաշտօնից և ինքը թողնէ Կ. Պոլիս։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 4 հոկտեմ.

Այսօր սպասվում է մեր քաղաքում Սադրէզամը. ժողովուրդը ընդ առաջ գնաց։ Շահի այդ առաջին վէզիրը այժմ նշանակված է Ատրպատականի ընդհանուր կառավարիչ և Նորին Մեծութեան Թագաժառանգի օգնական, որը Թաւրիզումն է նստում։ Ամեն մարդ յոյս դրած է Սադրէզամի վրա, թէ նա կը գայ և վերջ կը դնի քրդերի անկարգութիւններին, որով ամբողջ Ատրպատականը սարսափի մէջ է գտնվում։ Տեսնենք ինչ կը լինի։

Շահը սաստիկ բարկացած է քրդերի Ատրպատականում կատարած բարբարոսութիւնների մասին։ Պատմում են, Նորին Մեծութիւնը մի սպառնալի հեռագիր է ուղղել Մագուի Ալի-խանի որդի Թէյմուր-աղային, որը համարեա վասալական իշխան է հայոց հին Արտազ գաւառում. Հեռագրի բովանդակութիւնը այս է. «հաւատ լինի այն հացը, որ մեր կառավարութիւնից ուտում ես դու Շէյխ-Իբրահիմի նման մի քուրդ իմ երկիրը քարուքանդ է անում, իսկ դու աչքերդ բաց-բաց նայում ես»....Հեռագիրը վերջանում է այս խօսքերով. «տան օրվայ մէջ կամ քո գլուխը պիտի ուղարկես Թէհրան, կամ Շէյխ-Իբրահիմի գլուխը»....Այդ երկու գլուխներից արդեօք որը պիտի տարվի Թէհրան,— այժմ դժուար է վճռել։

Պարսիկների ինքնասիրութիւնը սաստիկ վիրաւորված է քրդերի անակնկալ յարձակումներից և նրանց գտած յաջողութիւններից։ Միանգամայն հայ և պարսիկ բնակիչների կոտորածը և մի քանի հազար հոգի մէջիդի մէջ այրելը այնքան չը զայրացրեց պարսիկներին, որքան կատաղեցան նրանք, լսելով, որ քրդերը կորել են տեղային հոգևորական գլխաւորի, մուշտէյիդի, գլուխը։ Այդ արդէն յայտնի ցոյց էր պարսիկների կրօնական զգացմունքը վիրաւորելու համար։ Սունիի Շէյխը կորել է տալիս Շիայի մուշտէյիդի գլուխը։

Բայց ժողովրդի բարկութիւնը ոչինչ նպատակի չի կարող հասցնել, քանի որ նրա ձեռքում զէնք չը կայ։ Այդ դէպքում ինքը կառավարութիւնը պէտք է պատժէ քրդերի անզգամութիւնը։ Դժբախտաբար կառավարութեան զօրքերը այժմ Ատրպատականում բոլորովին կենտրօնացած չեն։ Թաւրիզից ուղարկեցին քրդերի դէմ Էջդամադ-Սալթանային, որը տարաւ իր հետ 12,000-ի չափ հետևակ և հեծելազօր։ Նա ունի իր հետ թնդանօթներ և մեծ քանակութեամբ ռազմամթերք։ Բայց տակաւին մի նշանաւոր գործողութիւն չի կատարվել, որովհետև դեռ թշնամուն չի հանդիպել։ Թէհրանից ուղարկված է քրդերի դէմ արքայազն Համզա-Միրզան (Հէշմաթ-Դօվլա) 20,000 զօրքով, բայց ճանապարհի երկարութեան պատճառով դեռ չէ հասած։ Արքայազնի զօրքերի մէջ գտնվում են մի քանի եւրոպացի օֆիցէրներ, և ռուս պոլկօվնիկ Պամանտովիչը, որոնց մի քանի տարի առաջ Շահը բերել էր տուած իր զինուորներին կրթելու համար։ Այդ զօրքերը գալիս են Համադանի և Քրմանշահի վրայով։

Մագուից գնում է քրդերի դէմ, Խոյ և Սալմաստ գաւառների վրայով, լի-խանի որդի Թէյմուր աղան իր քաջ ձիաւորներով և հետևակներով։ Քրդերը ոչ ոքից այնքան երկիւղ չունեն, որքան Թէյմուր-աղայից, որից շատ անդամ ծանր հարուածներ են ստացել։

Ուրմիում մեծ պատրաստութիւններ է տեսնում քրդերի դէմ Իգբալ-Դօվլան, որը 10,000 զինուորների զօրապետ է. նա զինուորում է, բացի իր զօրքերից, թէ քաղաքի և թէ գաւառի բնակիչներին։

Մինչ պարսից կողմից ահագին ուժեր են ուղարկվում քրդերի դէմ, Շէյխ-Իբրահիմը, կարծես, արշամարշում է այդ բոլորը։ Դեռ մի քանի օր առաջ նա հրատարակեց իր յանդուգն շրջաբերականը, թէ «ամեն մի երկիր, որ չի խոնարհվի մարգարէի նոր խալիֆայի դրօշին, սրի և կրակի ճարակ կը դառնայ»....Պարսից Սօվուկ-Բուլախ քաղաքը արդէն նշանակված է որպէս մայրաքաղաք քրդական այդ ցնորամիտ պետութեան։ Շէյխ-Իբրահիմը իր դասը դրել է Դօգ-մէչիդի (կապոյտ մզկիթի) մէջ։ Նա իր հրոսակները, որոնց թիւը, որպէս հաւատացնում են, հասնում է 70,000-ի, բաժանել է երկու մասն. մի մասին առաջնորդում է Շէյխի երեց որդին, միւս մասին Շէյխի կրտսեր որդին։ Քրդերի նշանաւոր ցեղապետները դրանց հրամանի ներքոյ զօրապետների պաշտօն են կատարում։

Իմ նախընթաց նամակում յայտնել էի, որ Շէյխ-Իբրահիմի կրտսեր որդին ասպատակեց Ուրմիոյ լճակի արևելաֆիւսիային գաւառները, որպիսի են՝ Սօվուկ-Բուլախ, Բինաբ, Միանդաբ և Մարաղայ, որտեղից մի երկու օրվայ ճանապարհ է մինչև Թաւրիզ։ Այժմ լսում ենք, որ Շէյխի միւս որդին, երէցը, ասպատակել է Ուրմիոյ լճակի հարաւային գաւառները, որպիսի են՝ Սուլդուզ՝ Ուշնի, Բարանդուզ և Ուրմի գաւառի մի մասը, Որտեղից որ անցնում են այդ նոր մանգօլները իրանց ետեից թողնում են արիւն, կրակ և աւերմուն։ Ցիղեալ գաւառների հայ, ասորի, հրէայ, և պարսիկ բնակիչների մեծ մասը կոտորած են։ Քուրդ հրոսակների մի մասը մնում է տրած երկիրների վրա, բռնելով ամուր դիրքերը, իսկ միւս մասը տեղափոխում է յափշտակած աւարը և կողոպուտը դէպի Թիւրքիա։ Կողոպտում են բնակիչների շապիկից սկսած մինչև նրանց անասունները և տնային կարասիքը։ Կոտորում են առանց խնայելու սեռի և հասակի։

Քրդերի ասպատակութիւնների ժամանակ մեծ վնաս հասաւ Պարսկաստանի հայ վաճառականներին, որոնք Սօվուկ-Բուլախում ահագին գործեր ունէին։ Պէտք է ասած, որ այդ փոքրիկ քաղաքը միակ քաղաքն է ամբողջ Պարսկաստանում, ո կարելի է քրդաբնակ կոչել։ Այստեղ շատ տիրոջ ժամանակներից յետոյ բնակվում էին քուրդ ազնուականներ, որոնք տէր էին ընդարձակ կալուածքների և գիւղերի։ Կորցնելով նախնական կեանքի պարզ ձևերը, երբ այդ ազնուականները ընդունեցին պարսկական շռայլութիւնը, կեղծեցին աղքատանալ և ծանրաբեռնվիլ պարտքերով։ Նրանց կալուածքները և գիւղերը անցան հայ վաճառականների ձեռքը, որոնց պարապմունքներից մէկն էլ այն էր՝ քուրդ ազնուականներին տոկոսով փող տալ։ Այդ վաճառականներից շատերը թէև Թաւրիզումն են բնակվում, բայց ռուսաց և անգլիացոց հպատակներ են։ Զը գիտեմ, Թաւրիզի ռուսաց և անգլիական հիւպատոսները ինչ միջոցներ կընդունեն պաշտպանելու իրանց հպատակների շահերը, որ այժմ վտանգի է ենթարկված։ Տարակոյս չը կայ, որ եթէ քրդերը մշտապէս կը տիրեն Սօվուկ-Բուլախին, հայ վաճառականները կը զրկվեն իրանց գիւղերից։ Նրանցից շատերը փախան էնց այն ժամանակ, երբ լսեցին թէ քրդերը պէտք է յարձակում գործեն այդ քաղաքի վրա։ Մէկը Նազարբէկեան եղբայրներից գերի է ընկած քրդերի ձեռքը. այդ եղբայրները ունեն Սօվուկ Բուլախում ահագին քանակութեամբ կալուածքներ, գիւղեր և անասուններ։

Իմ անցեալ նամակներում ես ակնարկել էի այն բացայայտ ճշմարտութեան վրա, թէ քրդերի այժմեան շարժումը թելադրված է Թիւրքաց կառավարութիւնից, Եւրոպային ցոյց տալու համար մի բարբարոսական զօրութիւն, որին Կ. Պոլսի մահմեդական մամուլը աշխատում է կոչել քրդական միութիւն։ Այժմ բոլորովին ստուգվում է այդ ենթադրութիւնը ականատեսների խօսքերով, որոնք պատմում են, Շէյխ-Իբրահիմի հրամանի տակ գտնված 70,000 հոգին բոլորն քրդեր չեն, այլ մի մասը թուրքեր են, գուցէ թուրք զինուորներ, միայն քրդի ձևով հագնված։ Այս տեսակ խառնակ քրդական միութիւն կազմելը Բ. Դրան խարդախ քաղաքականութեան վերջին փորձերից մէկը պէտք է համարել։

Եթէ Թիւրքաց կառավարութիւնը ինքը մասնակից չը լինէր քրդական այդ շարժմանը, նա կարող էր շատ հեշտութեամբ արգելել։ Երևակայ ցէք, ինչպէս կարելի է հաւատալ, որ 70,000 հոգի, ընկեալ Ամեդիից և Նեհրիից (որոնք Մուսուլի և հին Նինուէի մերձակայքումն են) արշաւանք են գործում դէպի Պարսկաստան, Թիւրքաց երկրների վրայով, և Թիւրք կառավարութիւնը այդ մասին ոչինչ տեղեկութիւն չունի։ Եթէ նա գիտէր, բայց այնքան ուժ չունէր, որ կարողանար արգելել քրդերի արշաւանքը դէպի մի հարևան և բարեկամ պետութիւն, կարող էր նախապէս զգուշացնել պարսից կառավարութեանը, որ իրանց սահմանների վրա զօրքեր դնէին, որպէս զի քրդերը նրանց անպատրաստ վիճակի մէջ չը դտնէին։

Տարակոյս չը կայ, որ պարսից կառավարութիւնը չարդելով քրդերին, կը վռնդէ իր երկրից, և մի և նոյն ժամանակ եւրոպական պետութիւնների առաջն կը մերկացնէ Թիւրքիայի բոլոր խարդախութիւնները, պահանջելով, որպէս պատերազմական տուգանք, այն ահագին վնասները, որ քրդերը հասցրին Պարսկաստանին։

Դատապարտելին այն չէ, որ քուրդը բարբարոսութիւն է գործում,—դատապարտելին այն է, որ Թիւրքիան մնուցանում է իր մէջ այս տեսակ գազաններ և ինքը արհեստական կերպով աւելի բորբոքում է, աւելի խրախուսում է նրանց վայրենութիւնը։ Դեռ ևս Եւրոպան աշխատում է պահպանել մի այսպիսի հրէշաւոր պետութիւն....

***

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 հոկտեմբերի։ Բանակցութիւնները Չինաստանի հետ շարունակվում են Ս. Պետերբուրգի մէջ։ Նրանք վերջանում են։ Բիւցօվ յաճախ այցելում է Ցզենղին։ «Նօվօստի» լրագիրը լսել է, որ Լիվադիայի մէջ եղած խորհուրդի ժամանակ հաւանութիւն են ստացել կոմ Լօրիս-Մելիքովի վեց նախագիծներ, որոնք վերաբերում են պետական վարչութեան և մամուլի զանազան վերանորոգութիւններին։

ԴՈՒԲԼԻՆ, 14 հոկտեմբերի։ Ֆօրստեր հրաժարական տուաց, չը համակրելով իրլանդական հողային միութեան առաջնորդների դատաստանական հալածանքներին։

ԼՕՆԴՕՆ, 16 հոկտեմբերի Ֆօրստերի հրաժարվելու մասին տարածված լուրը հերքվում է։

ԲԱԳՈՒԶԱ, 16 հոկտեմբերի։ Թիւրքաց հաւատարմատար, որ տանում էր հրովարտակ, որով Դուլցինիօի բնակիչները հրաւիրվում էին չընդդիմանալ Դուլցինիօի յանձնելուն, սպանված է։ Անգլիական նաւատորմի թիւը հասցրած է 18 նաւերի։

ՀՌՕՄ, 16 հոկտեմբերի։ Պատգամաւորների ժողովը հրաւիրված է հաւաքվել Նոյեմբերի 3-ին։

ՍՕՖԻԱ 15 հոկտեմբերի։ Այսօր բացվեցաւ բոլգարական ազգային ժողովը։ Ի խանի բացակայութեան պատճառով գահական ճառը կարդաց մինիստր-նախագահ Ցանկօվ։ Ճառը խաղաղասէր է և շնորհակալութիւն է յայտնում Ռուսաստանին։

ԲԵՐԼԻՆ, 16 հոկտեմբերի։ Այսօր բացվեցաւ պրուսական սէյմը։ Միացեալ խորհուրդը հաւանութիւն տուեց այն առաջարկութեանը, որ սոցիալիստներին վերաբերեալ օրէնքի հիման վրա հասարակական հանգստութիւնը խանգարող անձանց արգելվի մնալ Համբուրգի, Ալտոնի, Վանդսբեկի, Պրինտերբրգի, Լաուենբերգի և նրանց շրջականների մէջ։ Այդ վճիռը ոյժ կունենայ մի տարի շարունակ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 հոկտեմբերի։ «Նօվօէ Վրեմիա» լրագիրը հաղորդում է, որ կոմ Լօրիս-Մելիքով Լիվադիայից ուղևորվեցաւ։

ՊԵՇՏ, 15 հոկտեմբերի։ Գայմերլէ յայտնեց պատգամաւորներին, որ Գերմանիայի և Աւստրիայի դաշնակցութիւնը անսասան է։ Աւստրիան մտադիր չէ Սերբիային զիջումներ անել։

ԲԵԼԳՐԱԴ, 15 հոկտեմբերի։ Մինիստրական դժուարութիւնները շարունակվում են։ «Իստօկ» լրագիրը հրաւիրում է բոլոր կուսակ-

ցութիւններին միանալ և ընդդիմադրել Աւստրիայի ձգտումներին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 Հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 95 ր. 37 կ., երկրորդ 93 ր., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 93 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 217 ր. 50 կ., երկրորդ 212 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 90 ր., 75 կ. երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 62 կ., ոսկի 8 ր. 16 կ., Ռուսաց 1 րուբլ Լոնդոնի վրա արժէ 24,09 պենս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 205 մարկ, 75 պֆ.։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ПОСТУПИЛИ ВЪ ПРОДАЖУ СЛѢДУЮЩІЯ КНИГИ:

Практическая Технологія, руководство къ химическому, механическому, техническому и ремесленному труду, съ приложеніемъ новѣйшихъ открытій, изобрѣтеній и усовершенствованій и ихъ примѣненій къ практикѣ, Настольная справочная книга для инженеровъ, архитекторовъ, техниковъ, машинистовъ, фабрикантовъ, промышленныхъ и ремесленныхъ завѣденій и школъ, съ рисунками. Составилъ технологъ А. Соколовскій, ц. 5 р. съ пересылк.

Самолеченіе Болѣзней книга о разумныхъ и цѣлообразныхъ способахъ и средствахъ къ возстановленію потеряннаго и разстроеннаго здоровья. Сохраненіе здоровья при тѣлесной дѣятельности и энергическомъ трудѣ. Полное здоровье при удовлетвореніи естественныхъ потребностей и различныхъ удовольствій (страстей). Леченіе болѣзней цѣлебными свойствами природы и разумнымъ образомъ жизни. Сочененіи Практическаго Врача К. Дубровина, ц. 5 р. съ пересылк.

Бракъ и безбрачіе во всѣхъ половыхъ и моральныхъ проявленіяхъ съ самыми любопытными историческими и медицинскими подробностями о взаимныхъ отношеніяхъ мужчины и женщины начиная съ глубокой древности и до настоящего времени Гигіена Физіологія, и Философія брака и безбрачія, сочиненіе доктора Медицины ДЕБЭ, въ 4 част. издан. 2-е, ц. 4 р. съ пересылк.

Мужское Безсиліе или неспособность къ брачному сожитію потеря сковмѣстныя страданія, зар женія, хилость происхо ящія отъ злоупотребленія вредными лекарствами, сперматоррея и половое безсиліе радикальное леченіе этой болѣзни, Сочиненіе доктора А. Шиллинга, ц. 2 р. съ пересылк.

Сладострастіе и Истощеніе общедоступное, изложеніе всѣхъ средствъ для совершеннаго излеченія венерической болѣзни, во всѣхъ ея видахъ и проявленіяхъ, возстановленіе плодородія, леченіе безплодія, возрожденіе утраченныхъ физическихъ силъ, леченіе безсилія, отстраненіе пагубной привычки къ рукоблудію леченіе Онанизма, рецептовъ лекарствъ для домашняго приготовленія кровоочистительные противувенерическіе декокты возбуждающіе и укрѣпляющіе напитки, сочиненіе доктора медицины и профессора П. Сорокина, издан. 2-е, ц. 3 р. съ пересылк.

Будьте Здоровы и лечитесь сами, когда нѣтъ врача, или самоучитель сельскаго леченія, составилъ докторъ медицины. Бенедиктъ, ч. I болѣзни лихорадочныя, ц. 4 р. съ пересылк.

Врачь, Совѣтникъ и руководитель для супруговъ и вообще для молодыхъ людей, составилъ докторъ Вейсъ, ц. 2 р. съ пересылк.

Наставленіе по новѣйшимъ наблюденіямъ для тѣхъ, которые въ брачномъ состояніи остаются безъ дѣтными, сочиненіе доктора Медицины А. Вебера, ц. 1 р. съ пересылк.

Врачъ секретныхъ болѣзней сочиненіе доктора Алберта, ц. 1 р. съ пересылк.

Зубной Врачь или искусство сохранять и лечить зубы а также и предохранять отъ порчи составъ Эскилъ, ц. 1 р. съ пересылк.

Міръ Половыхъ Страстей брачныя и безбрачныя наслажденія со всѣми ихъ послѣдствіями чрезвычайно интересные и разнообразные разсказы о половой жизни мужчины и женщины. Сочиненіе доктора Гильденбрандта ц. 4 р. 50 коп. съ пересылк.

Распознованіе Венерическихъ Болѣзней у женщинъ и дѣтей, составилъ докторъ Медицины Тарновскій, съ приложеніемъ атласа разкрашенныхъ рисунковъ, ц. 5 р. съ пересылк.

Объ Онанизмѣ и Безсиліи и средствахъ снова возстановлять и укрѣплять здоровье разстроенное онанизмомъ и безсиліемъ, сочиненіе доктора Медицины А. Брауна издан. 2-е, ц. 1 р. 50 коп. съ пересылк.

О Зачатіи и Зарожденіи Младенцовъ, объ укрѣпленіи оставшихъ мужскихъ членовъ и объ излеченіи отъ онанизма какъ мужчинъ такъ и женщинъ, сочиненіе полезное и понятное для всякаго, кто только желаетъ вполнѣ постигнуть эти важные предметы, сочиненіе доктора Медицины и Профессора Парижскаго Университета Могеляде Рюбомпра, издан. 3-е, ц. 1 р. 50 коп. съ пересылк.

Нѣтъ Болѣе Геморроя, изслѣдованіе сущности и причины геморроидальной болѣзни съ показаніемъ излеченія въ короткое время доктора Макензи, ц. 1 р. съ пересылк.

Съ требованіями Г.г. иногородные благоволятъ обращаться исключительно на имя Христофора Ивановича Петрова, С. Петербургъ на Фонтанкѣ, близь Англійскаго проспекта, домъ № 143, кв. № 16.

ՊԱՏԻՒ ՈՒՆԻՄ ՅԱՅՏՆԵԼ, Թիֆլիսի յարգելի հասարակութեանը մանաւանդ ԹԻՒՐՔԱՅ ԸՆԿԱՆ ԾԽԵԼՈՑԸ սիրողներին, որ ներկայ ամսվայ մէջ ծխախոտի մեր ԳՈՐԾԱՐԱՆԻ մէջ ստացված են Թիւրքիայից ԱՄԵՆԱԲԱՐՁՐ յատկութիւնների ԾԽԵԼՈՑՆԵՐ, այսինքն՝ ԵՆԻՋԻՕ ԿԱՕՐԷԿ ՊԵՐՄԻՋԱՆ ԲԱՄԱՄ, ՀՈՒՄԱ, ԲԱՖՐԱ և ՍԱՄՍՈՆ ամենաբարձր տեսակից։ Յիշեալ ծխախոտներից միայն ՊԱՏՈՒԷՐՈՎ ՆԵՐԻ համար կը պատրաստվեն ԳԻՆԸ 1 ՖՈՒՆՏԻ համար առաջին ՎԵՑ ՏԵՍԱԿՆԵՐԻՑ 4, 5, 6, 8, 10 և 12 ր., մի ֆունտ ՍԱՄՍՈՆԻ ԾԽԵԼՈՑԸ արժէ 3, 4 և 5 ր., պ.պ. գնողներին խնդրում եմ իրանց ՊԱՏՈՒԷՐՆԵՐՈՎ ԴԻՄԵԼ ծխախոտի իմ ԽԱՆՈՒԹԸ, որ գտնվում է ԴԻՎՐՅՈՎՅԱՅ փողոցի վրա, ԱՐԾՐՈՒՆՈՒ տանը № 1։ ՕՏԱՐԱԲԱՂԱՑԱԾՅԻ պարոններին խնդրում եմ պատուէրներ ՆԱՄԱԿՆԵՐՈՎ և ՓՈՂ ուղարկել պատուէրների համեմատ։ Պատուէրները անյապաղ կը կատարվեն և կուղարկվեն առաջին ՓՈՍՏՅՈՎ։

Գործարանատէր Ն. ՐՈՉԱՐԼԵՆՑ

2—3 (2)

ՍՏԱՑՎԱԾ ԵՆ տղամարդկերանց, կանանց և երեխաների ԿԱՍՏՈՐԻ ՇԼԵԱՊԱՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՐԿՆԵՐ և այլ նորաձև ապրանքներ արտասահմանի նորաձև ապրանքների պահեստի մէջ, որը գտնվում է ԴԱՎՈՐՅՈՎԱՅԱ փողոցի վրա ՍԱՐԱՋԵՎԻ ԵՒ ԾՕՎԵԱՆՕՎԻ տանը ՎԵՐԻՆ ՅԱՐԿԻ մէջ Գիրգորի վարշավեան ոտնամանների խանութի վերը։ ՄՈՒՏՔԸ ԲԱԳԻՑ։ Տղամարդկերանց ՇԼԵԱՊԱՆԵՐ 2 ր. 55 կ-ից և աւելի թանգ։

Մերօն Գուլասպեանց

5—10

ՀՐԱՒԻՐՎՈՒՄ ԵՆ սնանկացած Ի. և Ե. Զանջուղազով վաճառականների ԳԱՐՏԱՏԷՐԵՐԸ Թիֆլիսի Նահանգական դատարանի դահլիճը Հոկտեմբերի 19-ին, առաւօտեան 11 ժամին, ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ համար Զանջուղազովի գործերի մասին ՄՐՑՈՂԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ նշանակելու համար։

Երդվեալ հոգաբարձ. } Ա. Ստեփանով
} Բ. Եակուլով

5—8

Մի մոլդավեցի պարոն, Յովհաննէս Եաղշեան, որ ՈՒՍՈՒՑՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ունին Վերհափառ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ, ցանկանում է ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ և ԵԿԵՂԵՑԱԿԱՆ երգեցողութեան ՈՒՍՈՒՑՉԻ պաշտօն ստանալ։ Հասցէն. Թիֆլիսի Հայոց կոնսիստորիա, հարցնել Յովհաննէս Եաղշեանին։

8—8

ՎԱՐՁՈՎ է տրվում 6 ՍԵՆԱԿ ԽՈՀԱՆՈՑՈՎ, ՆԵՐՔՆԱՏՆՈՎ և այլ յարմարութիւններով։ Մանաւանդ յարմար է ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար։ Նորաշէնկայա փողոց, Իսակ ՓՈՒՂԻՆՕՎԻ տուն։ Գնի մասին կարելի է նոյն տեղը տեղեկանալ։

2 2

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացվեցաւ ՇՈԿՕԼԱԴ ԵՒ ԿԱԿԱՕ ՖՐԱՑ

13—20

Մինչև առաջիկայ 1881 թիւ յունվար ամիսը ՇՈՒՇԻ քաղաքում կը տպագրվի և առանձին գրքով լոյս կը տեսնի ՐԱՖՖԻ «ԽՆԹԸ» անունով վիպասանութիւնը։ Տպագրութիւնը կը լինի գեղեցիկ և մաքուր թղթի վրա։ Իւրաքանչիւր գրքի գինը կանխապէս բաժանորդ գրվողների համար նշանակվում է 1 րուբլի։ Իսկ տպագրութիւնից յետոյ գնողների համար գինը կը բարձրանայ։ Պ. պ. բաժանորդները թող բարեհաճեն իրանց վճարը ուղարկել այս հասցէով. Шуша. АВЕЛЬЮ ДАВИДОВИЧУ АПРЕСЯНЦУ. Въ конторѣ АРУНЯНЦА.

Հրատարակիչ ԱԲԵԼ Դ. ԱՊՐԵՍԵԱՆՑ

4—10

ՎԱՐՁՈՎ տրվում է ՁՈՐՍ սենեակից բաղկացած մի բնակարան, խոհանոցով և ներքնատով Օրբելեանների փողոցի վրա № 4, ներքին յարկում, Ցակոբ Դանդուրովի տան։

ՄԻԱՑՆ ՄԻ ՔԱՆԻ ՕՐՈՎ ԵՐԵՒԱՆԵԱՆ հրապարակի վրա, առևտրական բանկի տակ, Զուբալովի տանը Ֆ. ԷՄՄԱՅԻ խանութի մէջ ծախվում են զանազան ԱՐԴԻՒՆԱԲԵՐ ՈՒԹԻՒՆՆԵՐ իրանց տեսակով միակ ԺԱՄԱՑՈՑՅԻ ՇՐՋԱՆՆԵՐ ամերիկական ԿՐԻՍՏՈՐՈՑ, որոնք կարող ենք մրցել ոսկու հետ մեծագի արժանաւորութեամբ։ Այդ կարմիր շղթաները, որոնց մենք կամենում ենք տարածել ամբողջ աշխարհի մէջ, իրանց գնից աւելի էժան ծախվում մեր բոլոր ներկայացուցիչների մոտ։ Գինը 1 ր. 50 կ. և 2 ր.։ Որպէս զի ամենքը օգուտ քաղեն այդ դէպքից, իւրաքանչիւր գնող ստանում է ընծայ ՄԻ ԱՐԿՂԻԿ շապկի կոճակներով, կամ կանացի ԲՐՈՇԿԱ և ՕՂԵՐ։ Առևտուրը տևում է առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 6 ժամը։

1—2

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴՈԿՏՕՐ ԵԱԿՈՒԲՕՎԻՉ շարունակում է ընդունել ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ՍԻՖԻԼԻՍԻ ԿԱՆ հիւանդներին ընդունել երեքշաբթի օրերը առաւօտեան 11 ժամից մինչև 2 ժամը։ Գօլովինսկի փողոց, Մուխրանսկու տուն։

6—6

Դուրս եկաւ մամուլի տակից «Մանկական ձայնագրեալ երգարան» խմբագրութեամբ Եղնիկ քահանայի Երզնկեանց։ Հրատարակութեամբ Զ. Գրիգորեանցի։ Ընդունած է նախարարութեան գրաքննութիւնից և թեմական վիճակաւորի բարեհաճութեամբ Տրփխիսի բոլոր ուսումնարաններում։ Վաճառվում է բացառապէս Զ. Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառանոցում». գինն է 40 կ. զուտարով առնողներին զիջումն կը լինի։

6—10

Ֆ. Կ ԶԱՄԼԻՆՍԿՈՒ ԴԵՂԱՏԱՆ ԿԻՑ ՄԻԽ ՅԼՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ Տ. ԿՈՏՐԻՆԻ։ Ամենայն օրը ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ առաւօտեան 1 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը ներքին, երեխայական, ջղային, վիներական և կաշու հիւանդութիւններ ունեցող ՀԻՒԱՆԴՆԵՐԸ։

5—6

Ընդունում եմ ամեն տեսակ պատուէրներ ԿՈՆՖԷԿՏՆԵՐԻ, ՊԵՐՕԺՆԻ, ՍՈՒԽԱՐԻ զանազան տեսակի, մուրաբի, և ընտիր տեսակ ՖՐՈՒԿՏՕՎԻ ԿՈՆՖԷԿՏԻ, և ամեն տեսակ կանդիտերի ապրանքի, շատ մատչելի գներով։ Պատուէրները կը կատարվեն ամեն ճշտութեամբ, և խղճմտաբարցանկացողք կարող են դիմել ինձ հետևեալ հասցէով, Въ Тифлисъ, МАРТИРОСУ АХНАЗАРОВУ. НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ, МАГАЗИНЪ ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ. Փոստային կոնֆէկտ պահանջողների ճանապարհածախքը ինձ վրա եմ առնում,

Մ. Հախնազարեանց.

28—50

Դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ և Զ. Գրիգորեանցի գրախանութներում Ս. Մանդինեանի հետևեալ դասագրքեր.

1. Ազգային Ընտանեկան աշխարհք և Այբբենարան (ա. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . 25 կ.
2. Նոյնը ուսուցիչների համար բացատրութիւններով հանդերձ) . . . . . 75 կ.
3. Ազգային Դիւցազնական աշխարհ (բ. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . . . . 30 կ.
4. Նահապետական և հայրենի աշխարհ (գ. տարուայ ուսմունք և ընթերցմունք (բ. տպագրութիւն) . . . . . 65 կ.



Կ. ՊԱՆՅԵՐ, ԱՏԱՄԱՆԱԿԱՅԻՑ ՓՈՂՈՑ տուն ՉՈՒԲԱԼՕՎԻ։ Եկող ձմեռվայ սեզոնի համար առաջարկում եմ պատուելի հասարակութեանը ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՉԵՌԻ և ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրոպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ, ամենանոր ՉԵՌԵՐԻ, չափազանց Լիժան գներով, այսինքն Չեռքի մեքենաներ 12—5 ռուբլ։ Ոտքի 50—80 ռուբլ։



15—52

Дозволено цензурою Тифлисъ, 17 Октября 1880 г. Տպարան եղբայրք Դաւթեանցների Типографія братьевъ Давидовыхъ